



[ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հանդիպեց լրագրողների հետ,](#)

15.09.2015

Սեպտեմբերի 13-ին, "Մարդը կարիքի մեջ" չեխական կազմակերպության հայաստանյան ներկայացուցչության կողմից կազմակերպված մեդիա արշավի շրջանակներում, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը հանդիպեց մի խումբ լրագրողների հետ: Մարզպետ Հ. Սարգսյանը ողջունեց լրագրողներին և շնորհակալություն հայտնեց այցի և մարզի հիմնահարցերի նկատմամբ ցուցաբերած ուշադրության համար: Հանդիպման ընթացքում լրագրողների կողմից բարձրացվեցին հարցեր կապված մարզի գյուղատնտեսության ոլորտի հետ, մասնավորապես՝ խաղողի բերքատվություն, մթերում և սակագնային քաղաքականություն: Խոսվեց մարզի բնակչության զբաղվածության, աշխատատեղերի ավելացման հեռանկաների, կրթական, առողջապահական ոլորտների, սահմանամերձ համայնքների խնդիրների, միգրացիոն և այլ հարցերի շուրջ: Մարզպետարանում կայացած հարցազրույցից հետո՝ մարզպետի ուղեկցությամբ, լրագրողներն այցելեցին Եղեգնաձորի նորաբաց պահածոների գործարան, ծանոթացան գործարանի աշխատանքային պայմաններին, արտադրատեսակներին, զրուցեցին գործարանում աշխատող բանվորների և աշխատակազմի հետ: Այնուհետև հանդիպում տեղի ունեցավ ձեռնարկության հիմնադիր և գործադիր տնօրեն Սարգիս Պողոսյանի հետ: Հանդիպման ընթացքում Ս. Պողոսյանը լրագրողներին ներկայացրեց մանրամասներ ձեռնարկության գործունեության, հետագա ծրագրերի և հեռանկարային այլ նախագծերի մասին: